Պարույր Սևակ

Քարտեզի առաջ

Ահա քարտեզն իմ դեմ -
Հողագունդը համայն,
Որ չգիտես ինչից, ինչ խոլ ուժից, ահա
Ծեփվել, տափակվել է իմ տան պատին.
Եվ իմ մատն է շարժվում նրա երկայնքն ի լայն,
Քաղաքներ է մտնում նա բազմաթիվ.-
Չի՛ մոտենում ոմանց,
Կարծես թե ինքն իրեն չանարգելու համար,
Իսկ ոմանցից հեռու,
Իբրև հարգ ու պատիվ,
Մի պահ ակնածանքով անշարժանում...
Ահա քարտեզն իմ դեմ -
Սարդոստայնի նման
Սարքած խաչմերուկներ ու գծերի հանգույց,
Ուր ամեն գույն կարծես ունի տարբեր իմաստ
Եվ ամեն մի երկիր՝ ուրիշ մի գույն.-
Մեկը դեղին՝ դեղնած կարծես ներքին մաղձից,
Մյուսը գորշագույն՝ մոխրի նման,
Մեկը դժգույն, գունատ,
Կարծես իր դարավոր ճնշումից ու քաղցից,
Մյուսն՝ օտար փայլով շառագունած...

Այս քարտեզն է ահա իմ աչքերի հանդեպ,
Ուր գույների, բոլոր երանգների ծովում
Իմ երկիրն է շողում,
Իմ երկիրը բոսո՛ր, կարմրահանդերձ...
Եվ իսկապես, արդյոք չունե՞ն ներքին իմաստ
Այս գույները բոլոր, նշաններն այս թաքուն:
Բարբաջա՞նք է անմիտ,
Սակայն ահավասիկ իմ աչքերի դիմաց,
Գծով ցանկապատված այս վանդակում,
Կարծես թե պահված է մի գայլ պոչատ,
Որ թաթերը խրած Հոենոսից այն կողմ,
Երախը լայն բացած,
Դեպի մեզ է նայում վայրի ախորժակով:
Եվ գծերն այս...
Մի՞թե ձեզ չեն ասում ոչինչ:
Չեմ հարգում գծերն այն, շոշափուկներն այն ցիլ,
Որ երկիրն այս ծերուկ
Տարածում է հեռու -
Շոտլանդիայից մինչև Ցեյլոն ու Հնդկաչին,
Նա, որ Լամանշից վեր,
Ծովային մի հսկա հիդրայի պես,
Ցցել է իր մեջքը ջրերի մեջ վճիտ:
Եվ կամ թե սա, կարծես
Լինի մի կենտ կոշիկ երկայնաճիտ
(Մյուս թաթը իր հին փառքի հետ կորցրած),
Որ թաղվել է կիսով ծովում Միջերկրական
Եվ չի սուզվել սակայն...
Է՛հ, թող և չսուզվի,
Ու թող ապրի, մնա, որքան ինքը կուզի,
Միայն թե թող ապրի խղճով մաքուր

Եվ անառիթ, կամ թե պատրվակով մի սուտ
Խաղաղ հարևանի տուն չխուժի...
...Հենց այստեղ է հատվում այն ծովային ճամփան,
Որով կարող եմ ես ամենուրեք հասնել,
Ամենուրեք, ուր որ սիրտս ուզի:
Բայց միտք ունի՞ արդյոք ձանձրույթից սիրտ մաշել,
Անցնել մյուս ափը անծայր օվկիանոսի
Եվ այն հողը մտնել, որն իբրև պարզ կշեռք
Պանամայի բարակ կշռափայտից
Կախած իր հակամետ նժարներով երկու՝
Դոլլարների վարկով,
Եվ նորագյուտ արնոտ ատոմային արկով
Երկրագնդի բախտը կշռե՞լ է հավակնում...
Եվ ավելի լավ չէ՞ անցնել փոքր-ինչ կուզիկ
Դարավանդը այս թեք, որից փոքր այն կողմ
Էգեյանն է նազում անփութորե՛ն անփույթ...
Ցուցամատս է դողում լարման ուժից,
Առանձին չափով է այստեղ սիրտս խփում...
Ծովն է կապո՛ւյտ, կապո՛ւյտ -
Նման մաքուր խղճի՝
Հանցապարտ ափերի քարե սրտին փարված,
Իսկ մաքրաթույր ծովի երկու ափում,
Իբրև խարխուլ մեջիթ,
Մի երկիր է փռված...
Իր ջրերով ծովը երկփեղկել է նրան,
Կիսել անհավասար երկու մասի,
Բայց այդ իրավունք է մի՞թե տալիս նրան,
Որ իր օրինակով միջահատի, կիսի
Մի հողաշերտ (ծանո՛թ և հարազատ անուն),
Ուր աղբյուրն այս մասի

Այնտե՛ղ է լիճ դառնում,
Եվ այն, մյուս մասում սկիզբ առած գետը,
Չուզենալով օտար ծովերի մեջ թափվել,
Մոլորվում է այնտեղ ու ճահճանում...
...Օ, դժվա՛ր է ապրել մեզ արտասահմանում
Թեկուզ միա՛յն մատով...
Հեռվից իմ երկիրն է հմայում և գերում
Եվ ես, ասես ծանոթ արահետով,
Կամենում եմ դառնալ, դառնալ նրա՛ն փարվել,
Փարվել նրան, իբրև արդարության,
Փարվել նրան, իբրև այս աշխարհի խղճի՝
Ցուցամատիս վրա բերած հայցումնագիր հազար նոտա՛,
Բոլոր նրա՛նց կողմից, ովքեր չունեն կյանքում,
Այ՛ո, չունեն կյանքում այլ իրավունք,
Բացի քե՛զ, իմ երկիր, հավատալուց...
Բերած և այն հույսը, և այն հո՛ւյսը նաև,
Թե շտկվեն պիտի այն շեղումնե՛րն ամեն,
Որ դեռ մնացել են, քարտեզ, իբրև սև բիծ,
Իբրև բռնակալի յաթաղանի սպի
Քո անտարբեր դեմքի
Եվ... պատմության պղտոր հայացքի մեջ:

7-9.II.1947թ.
Երևան